Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Մեծամոր 03 դեկտեմբերի 2024թ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-34/24» ծածկագրով հրապարակված մրցույթի գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար միջադիրների, խծուծների ձեռքբերման նպատակով սույն թվականի նոյեմբերի 7-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-34/24» ծածկագրով գնման ընթացակարգ, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԳԱ Յունիոն» ՍՊԸ-ն:

Հայտի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովի կողմից պարզվել է, որ 2024 թվականի նոյեմբերի 18-ի դրությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց վերաբերյալ հրապարակված ցուցակում ներառված «ՄԳԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 08267927) հանդիսանում է փոխկապակցված անձ «ԳԱ Յունիոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02321533), վերջինս՝ 2024 թվականի հոկտեմբերի 26-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 26-ը ներառյալ գտնվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 121-րդ կետի նախատեսված ցուցակում մասնակցի ներառվելը (տվյալ դեպքում «ՄԳԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն), դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Համաձայն՝ ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի բ) պարբերության մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին, իսկ համաձայն 32-րդ կետի 19-րդ ենթակետի, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) պարբերությամբ՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԳԱ Յունիոն» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «ԳԱ Յունիոն» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**